

Ժողովուրդ

160
(3010)

19 նոյեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

Ք. Երևան, Արվյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱՆԴՐԱՆԻԿ ԲՈՉԱՐՅԱՆԻ ՀԱՂԹԱՐԵԱՎԸ ԸՆԲՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է



Նիկոլ Փաշինյանի սպիրվելուց հետո ներքաղաքական կյանքում ամենաքննարկվող թեման Նախօրեից սկսված գիշերային պաշտոնակազմում են: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ ուժային կառույցների ղեկավարներին հեռացնելու պլանները վաղուց էին գծված՝ երբ Նիկոլ Փաշինյանը համաձայնություն տվեց, որ նրանք պարտադիր մասնակցեն Անդրանիկ Բոչարյանի կողմից կազմակերպված լսումներին, ինչը խայտառակություն դարձավ ուժային բոլոր կառույցների համար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նոյեմբերի 12-ին, երբ ԶՊ վարչության նիստին մասնակցում էր Նաե Անդրանիկ Բոչարյանը, ով պետք է պատասխան տար իր արած՝ գործարարի «դեղ ցրողներ» արտահայտության համար, որը վերաբերում էր Հրաչյա Հակոբյանին և Սիսակ Գաբրիելյանին, օգտվելով առիթից՝ Նիկոլ Փաշինյանին ուժային կառույցներից փաստարկված դժգոհություն է հայտնել՝ ասելով, որ ոչ մի ուժային կառույց իր տեղում չէ: Եվ զարմանալի զուգահեռությամբ նրա կողմից բերված փաստարկներից շատերը նոյեմբերի 15-ի կառավարության նիստում Նիկոլ Փաշինյանը օգտագործել է:

«Ովքեր Նախկինում իրենց արտոնյալ էին զգում, շարունակում են... ինչ ուզեցիք՝ տվեցի, արդյունք չկա... Ես արդեն խորհրդակցություններում չեմ անելու, ես որոշումներ եմ կայացնելու»:

Այս նիստից հետո ուժային կառույցների ղեկավարները շտապել են գործողություններ իրականացնել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը ուժեղացված հսկողություն է սահմանել մայրաքաղաքում, քննչական մարմինների ղեկավարներն իրենց ենթակայներից բացառություններ են պահանջել, թե Փաշինյանին հետաքրքրող գործերում ինչու առաջընթաց չկա, ինչ խոչընդոտներ կան, որպեսզի պատրաստվեն Փաշինյանին զեկուցել իրավիճակի մասին: Քանի որ որեւէ ակնարկ անգամ չեն ստացել, որ պետք է հեռանան կարճ ժամանակում, կարծել են, թե Փաշինյանը վերջնաժամկետ է տվել իրենց՝ սխալները շտկելու և բացթողումները լրացնելու համար:

Եվ ահա, կիրակի օրը անակնկալ կերպով, Ենքաձակից անցնելով Դիլիջանով, հետո մասնակցելով հարսանիքի, Փաշինյանը կտրուկ զայրացել է, և ուժայինների մի շարք ղեկավարներ կեսգիշերին մոտ զանգ են ստացել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանից, ով փոխանցել է վարչապետի պահանջը. ներկայացնել հրաժարականի դիմում և հեռանալ՝ չմոռանալով շնորհակալություն հայտնել համատեղ աշխատանքի համար:

«Վոթսափ»-ով կամ այլ կերպ ՍՄՍ հաղորդագրություն չեն ստացել, ոչ էլ ուղիղ Փաշինյանից են հրահանգ ստացել՝ թողնելու պաշտոնները, ինչպես վարչապետը երեկ հայտարարեց: Ողջ գործընթացը կազմակերպվել է Արայիկ Հարությունյանի միջոցով: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթը իր աղբյուրներից պարզեց, որ 2021 թվականի ընտրություններից հետո Նիկոլ Փաշինյանը փոխել է իր հեռախոսահամարը և կառավարության անդամների հետ սկսել է շփվել բացառապես ուղիղ կապով՝ սենյակից. խիստ անհրաժեշտության դեպքում էլ էլեկտրոնային նամակ է գրել, կամ հազվադեպ՝ Ֆեյսբուքյան messenger-ով է կապվել:

Ուժայինների մասով Անդրանիկ Բոչարյան ու Հովիվ Աղազարյան տանդեմը հաղթեց. մնում է սպասել զարգացումներին:



ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բազմապրոֆիլ Նախարար Գևորգյանը մեկ օր առաջ Նիկոլ Փաշինյանի հետ խնջույքի է մասնակցել, բայց Փաշինյանը անձամբ չի պահանջել հրաժարականի դիմում գրել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Նախարար Գևորգյանին ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանն ավելի ուշ է զանգահարել և տեղեկացրել, որ Փաշինյանը պահանջում է ինքնակամ ազատման դիմում գրել ու լուռ հեռանալ: Եվ ահա, Նախարարը վերցրել է թուղթը և ինքնակամ շարադրել, որ ցանկանում է հեռանալ աշխատանքից. թե ինչու՞ պարզ չէ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ անորոշ վիճակում են հայտնվել Հայաստանի 10 մարզերի մարզպետները, որոնք այս ընթացքում հասցրել էին հարաբերություններ կառուցել Գևորգյանի հետ: Շատ մարզպետներ սպասում են, թե ով է լինելու նոր Նախարարը և, ըստ այդմ, ովքեր պետք է ազատման դիմումներ գրեն՝ Նաե մարզպետների պաշտոններից ազատվելու: Այնպես որ, պաշտոնակազմները փոթորկել են Նաե ՀՀ բոլոր մարզերը:



«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 2024 թ.-ի հունվարի 1-ից մեր երկրում արտադրվող ծխախոտի տուփի վրա պետք է փակցված լինի համապատասխան մակնշում, գրաֆիկական նկար, ինչն ամբողջովին չի իրականացվում ու արտադրողների մի մասը շարունակում իրացնել արտադրությունն առանց նման մակնշումների: ՌԴ-ում բնակվող մեր ընթերցողներից մեկը օրերս մեզ է ուղարկել ՀՀ-ում հայտնի արտադրողի արտադրանք, որը Նախատեսված է ռուսական շուկայի համար, որում տեսանելի է, որ կատարված է ԵԱՏՄ կանոնակարգերով սահմանված պահանջը և հայկական ծխախոտի տուփի վրա առկա է գրաֆիկական նկար: Սակայն այդ նույն արտադրողը հայաստանյան շուկայում վաճառում է իր ապրանքն առանց նման նկարների: Նախորդ հրապարակումների ժամանակ ՊԵԿ մեր աղբյուրները հայտնել էին, որ արտադրողների մի մասը կարողանում է խուսափել օրենքի պահանջից՝ ներկայացնելով, թե ամբողջ տարի դեռ վաճառում է մինչև օրենսդրական կարգավորումներն արտադրած ու պահեստավորած ծխախոտ, իսկ ահա արտահանման պարագայում ուղարկում են արդեն «նոր» արտադրանք: Զգուշացրելու համար առողջությանը վնասող արտադրանք՝ մենք չենք հրապարակում ծխախոտի տուփի լուսանկարը: Հույս ունենք, որ ՊԵԿ նոր ղեկավարությունն ավելի ուշադիր կլինի ոլորտին ու իրական կարգուկանոն կբերի:



Պաշտոնակազմները կարող է ծնել նոր կոռուպցիա և «խնամի-ծանոթ-բարեկամի» մի նոր շրջա, քանի որ պաշտոնակազմներից հետո մշուշում արդեն իսկ նշմարվում են նոր թեկնածուների անունները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Բարձրագույն դատական խորհրդի Նախագահի պաշտոնում Կարեն Անդրեասյանին կփոխարինի Նիկոլ Փաշինյանի քվարկ (Տավուշի մարզպետ և Աժ պատգամավոր) Դավուդյանների հորաքրոջ որդին՝ ԲԴԽ անդամ Արթուր Աթաբեկյանը: Արթուր Աթաբեկյանը 2012 թվականի հոկտեմբերի 18-ին նշանակվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, 2018 թվականի օգոստոսի 10-ի հրամանագրով՝ սնանկության դատարանի դատավոր: 2022 թ. հունվարի 13-ին նշանակվել է սնանկության դատարանի Նախագահ՝ Երեք տարի ժամկետով, բայց չի կառավարել իր ժամկետում, 2023 թվականի ապրիլի 7-ին ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իսկ 2024 թ. փետրվարի 12-ին նշանակվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր: Այսպիսով՝ ի՞նչ ունեցվածք է հայտարարագրել իշխանականների սիրելի տոհմի ազգակից և ԲԴԽ Նախագահի պաշտոնի հավակնորդ Արթուր Աթաբեկյանը: Ըստ Արթուր Աթաբեկյանի՝ 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրի՝ Նա հայտարարագրել է 6 անշարժ գույք՝ 1 բնակարան բազմաբնակարան շենքում, 1 անհատական բնակելի տուն, 3 հողամաս և 1 ավտոկայանատեղի: Անհատական բնակելի տունը և երկու հողամասը 2018 թվականին Աթաբեկյանը ժառանգություն է ստացել Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքում: Բազմաբնակարան շենքում գտնվող բնակարանը և ավտոկայանատեղին ձեռք են բերվել 2017 թվականին և գտնվում են Արաբկիր վարչական շրջանում: ԲԴԽ անդամ Աթաբեկյանը հայտարարագրել է տրանսպորտային մեկ միջոց՝ 2019 թվականի արտադրության TOYOTA մակնիշի, որը գնել է 2022 թվականին: Արթուր Աթաբեկյանն ունի ես մեկ մեքենա, որը սեփականության իրավունքով իրեն չի պատկանում, սակայն շահագործվում է իր կողմից: Դատավորի բանկային հաշիվների մնացորդը կազմել է 2 մլն 355 հազար դրամ, որը ավելի է տարեկան բացառապես հաշիվների մնացորդից գրեթե 2 միլիոն դրամով: **Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:**



ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՋՈՂՎԵԼ Է ՓՐԿԵԼ ԿՆՈՋ ԿՅԱՆՔԸ

ԻՆՔՆԱՍՊԱՆ ԵՎԱԾ ԶԻՆՎՈՐԻ ՄԱՅՐԸ ԿՅԱՆՔԻՆ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ՓՈՐՁ Է ԱՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի սեղեկու-
թյուններով օրերս Արսաւաթի կարգա-
դասական զորամասում ինֆոատյան
եղած զինվորի մայրը ինֆոատյան
է գնացել: Նա մկնդեղ է կերել, սա-
կայն բժիշկներին հաջողվել է փրկել
մահացած զինծառայողի մորը:



Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հա-
սած տեղեկությունների՝ նա կարգապա-
հական զորամասում հայտնվել է ծառա-
յակիցների հետ վիճաբանելու համար ու
դեպքի օրը նա պետք է գնար զորամաս,
սակայն նրան գտնում են կախված վի-
ճակում:

Իրավապահների մոտ կասկածներ ու
հարցեր են առաջացել, որ նա միշտ աչ-
քի է ընկել համարձակ կեցվածքով ու
դժվար թե ծառայակից զինվորների հետ
կոնֆլիկտ ունենալու ու զորամաս վերա-
դառնալու համար վախեր ունենար,

ավելին՝ նա մի քանի ամսից զորացու-
վել էր:
«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկու-
թյուններով՝ ռազմական ոստիկանու-
թյան ենթակայության տակ գտնվող
կարգապահական զորամասում գտել են
ժամկետային զինծառայողի դի՝ ըստ
նախնական վարկածի՝ կախված վիճա-
կում:

Վերջինս Նարեկ Գրիգորյանն է, ով 6
ամսից պետք է ավարտեր ծառայությու-
նը:

ՔՍԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱՎԱՆ ՔՐՈՆԻԿՈՍ

ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱԼԱՄԱՆՅԱՆԸ
ԿԱԼԱՆՎՈՐՎԵԼ Է

Գյումրու նախկին քաղաքապետ Սամ-
վել Բալասանյանի կրտսեր որդու՝ խաչա-
տուր Բալասանյանի տնային կալանքը
փոխվել է բանտային կալանքով, տեղե-
կությունը «Ազատության»-ը հաստատեց
ընտանիքի փաստաբան Տիգրան Գրի-
գորյանը Եւ Եւզե՛ Կերպենիչ դատարա-
նի այս որոշումը կմեկնաբանի ավելի ուշ:
Տեղեկությունը հաստատում է նաեւ
դատախազությունը:

Խաչատուր Բալասանյանը հոկտեմբե-
րի 11-ին էր ձերբակալվել «Զվարթնոց»
օդանավայանում ԱՄՆ մեկնելու ճա-
նապարհին: Ապա առաջին ատյանի դա-
տարանը 70 մլն դրամ գրավի դիմաց նրա
նկատմամբ տնային կալանք էր նշանա-
կել, ինչը դատախազությունը բողոքա-
րել էր:

Կրտսեր Բալասանյանը մեղադրվում է
Գյումրու Սեվ բերդ ամրոցի հարակից հո-

դատարածքներն ապօրինի ձեռք բերե-
լու, իսկ գործով անցնող մյուս 4 անձինք,
այդ թվում՝ հայրը՝ նախկին քաղաքապետ
Սամվել Բալասանյանը, հողատարածքն
ապօրինի օտարելու համար:

ԵՂԲԱՅՐԸ
ԿՐԱԿԵԼ Է ԵՂԲՈՐԸ
ՈՒ ԶՐԿԵԼ
ԿՅԱՆՔԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամաս-
ներ են հայտնի դարձել Աշափնյակի
կրակոցներից: Եղբայրը կրակել է եղբոր
վրա ու նրան զրկել կյանքից:

Մեզ հասած լուրերի համաձայն՝
Աշափնյակում հայտնի «Վե»-ի ավտո-
վագման կետի մոտ են գնացել մի խումբ
տղաներ հարցերի պարզաբանման նպա-
տակով: Լվացման կետը պատկանել է
Փարաքարի ՔՊ-ական համայնքապետ
Լյուդվիգ Գյուլնազարյանի ընկերոջը,
որը նույնպես դեպքի վայրում է եղել՝ իր

ընկերների կողքին լինելու ու նրանց հետ
վեճի եկած անձանց, ըստ էության, պա-
տասխան տալու համար:

Արդյունքում ավտոկողման կետի մոտ
հնչել են կրակոցներ: Միջադեպի մասնա-
կիցներից մեկը, որը կռվի է գնացել եղ-
բոր հետ, հանել է զենքն ու կրակել, ինչի
հետևանքով փամփուշտը դիպել է իր
եղբորը: Վերջինս հիվանդանոցում մա-
հացել է:

Shamshyan.com-ը գրել էր, որ նոյեմբե-
րի 16-ին սպանություն է տեղի ունեցել
Երեւանում: Կրակոցներից մեկ անձ
սպանվել է:

Ոստիկաններն ու պարեկները պարզել
են, որ մահացածը Երեւանի բնակիչ 42-
ամյա Արթուր Մանուկյանն է, ով, ըստ հի-
վանդանոցի հայտնած տեղեկություննե-
րի, մահացել է կրակոցից: Նրա մարմնի
վրա առկա է եղել կրակոցի 1 հետք:

«Յրապարակ»-ն էլ գրել էր, որ իր տե-
ղեկություններով՝ սպանության վայրում է
եղել Եւ այս թեմային մասնակից է եղել
Նաեւ Փարաքարի ՔՊ-ական համայնքա-
պետ Լյուդվիգ Գյուլնազարյանը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ՕՊԵՐԱՏԻՎ
ԻՐԱՎԻՃԱԿԸ՝
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ըստ ոստիկանության օպերատիվ
հաղորդագրությունների ամփոփագ-
րերի՝ նոյեմբերի 15-ից 18-ը ՆԳՆ ոս-
տիկանության ստորաբաժանումները
բացահայտել են հանցագործության
220 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում
կատարված:

Այս մասին հայտնում են ՆԳՆ ոս-
տիկանությունից:

Մասնավորապես՝ թմրանյութի
հայտնաբերման՝ 46, տրանսպորտա-
յին միջոց վարելու իրավունքից զրկ-
ված կամ այդ իրավունքը կասեցված
կամ այդ իրավունքը չունեցող անձի
կողմից տրանսպորտային միջոց վա-
րելու՝ 26, մարմնական վնասվածք
պատճառելու՝ 17, զենք-զինամթերքի
առգրավման՝ 15, խարդախության՝ 14,
հոգեկան ներգործության, անձնական
ունեցվածքի գողության ու սառը զենք
կրելու՝ 12-ական, ֆիզիկական ներ-
գործության՝ 11, գույքը ոչնչացնելու
կամ վնասելու եւ խուլիգանության՝ 5-
ական, սառը զենքի հայտնաբերման՝
4, բնակարանային գողության, ապօ-
րինի ձեռնարկատիրական գործունե-
ության, ծառերը, թփերը ապօրինի
հատելու, ինքնավնասման, Երեխայի
դաստիարակության կամ խնամքի
պարտականությունները չկատարելու
կամ ոչ պատշաճ կատարելու եւ անձ-
նական կամ ընտանեկան կյանքի
զաղոտնությունը խախտելու՝ 3-ական,
թմրանյութի իրացման՝ 2, սպանու-
թյան, խոշտանգման, կաշառակերու-
թյան, վարժական հավաքից խուսա-
փելու, ուրիշի գույքը ապօրինի օգ-
տագործելու, սուտ մատուցման, մար-
դու առեւանգման, շորթման, հարկե-
րը, տուրքերը կամ այլ վճարներ չվճա-
րելու, կալանավայրում արգելված
իրեր պահելու, փաստաթղթի կեղծի-
քի, իրացնելու նպատակով կեղծ ար-
ժույթ, արժեթղթեր պահելու եւ տեղա-
փոխելու, ապացույցներ կամ դատա-
վարական փաստաթղթեր կամ օպե-
րատիվ-հետախուզական միջոցառ-
ման արդյունքով ստացված տվյալներ
կամ առարկաներ կեղծելու, անհե-
տաձգելի միջամտության որոշումը
կամ պաշտպանական որոշումը չկա-
տարելու եւ արգելանքի տակ գտնվող
գույքի նկատմամբ ապօրինի արարք
գործելու՝ 1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցա-
գործություններից բացահայտվել է
անձնական ունեցվածքի գողության՝
3, գույքի վնասման եւ սպանության
փորձի՝ 1-ական դեպք:

Հայտնաբերվել է 18 հետախուզվող,
կամավոր ներկայացել՝ 1-ը:

Գրանցվել է զենք-զինամթերքի կա-
մավոր հանձնման 3 դեպք:

Անցած 3 օրվա ընթացքում հանրա-
պետությունում արձանագրվել է ճա-
նապարհատրանսպորտային 37 պա-
տահար. 1 մարդ զոհվել է, 52-ը՝ ստա-
ցել տարբեր աստիճանի մարմնական
վնասվածքներ:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 15-ից 18-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժա-
նումների կողմից բացահայտվել է հանցագործության 220 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:



ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Իմ հաճիվների վրա դրված են արգելանքներ. ինչպե՞ս կասարել վճարումը եւ շուտ ազատվել դրանցից:

Մարգարիտա Գալստյան (57 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկադիր ծառայությունում հարուցված կատարողական վարույթներով համապատասխան գումարների վճարումները կարող են կատարվել հետեւյալ տարբերակներով՝

-Անհրաժեշտ է մոտենալ ցանկացած վճարման (EASYPAY, TELCELL, MOBIDRAM) տերմինալի մոտ, սեղմել «Հարկադիր ծառայություն» պատուհանը, մուտքագրել Ձեր հեռախոսահամարը եւ սոցիալական քարտի համարը՝ ՀՀ-Ն, որից հետո էկրանին կհայտնվեն տվյալներ Ձեր նկատմամբ հարկադիր ծառայությունում հարուցված վարույթների եւ արգելանքների մասին, ինչպես նաեւ տվյալներ արգելանքների համար հիմք հանդիսացող գումարների չափերի եւ պահանջատերերի մասին: Տերմինալով կարող եք ըստ հաջորդականության կատարել բոլոր վճարումները, եւ կիրառված արգելանքները կվերանան նույն օրվա ընթացքում:

-Անձնագրով եւ սոցիալական քարտով մոտենալ Հարկադիր ծառայություն՝ ք. Երեւան, Հալաբյան 41ա հասցեով, եւ տեղում սպասարկող աշխատակիցների մոտ կատարել բոլոր վճարումները: Արգելանքները կհանվեն մեկ օրվա ընթացքում:

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարում

«ԺՈՂՎՈՒՐԳ». Համապատասխան վճարումները կարող եք կատարել նաեւ ՀՀ-ում գործող ցանկացած բանկի մասնաճյուղում, «Հայ փոստ» ՓԲԸ-ի բաժանմունքներում, եւ այս տարբերակի դեպքում պետք է Ձեզ հետ ունենաք անձնագիր, սոցիալական քարտ եւ հարկադիր կատարողի համապատասխան որոշման օրինակը, որի հիման վրա՝ կկատարվի վճարումը: Արգելանքը վճարումից հետո կհանվի երեք օրվա ընթացքում:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Գասավորը, իմ կարծիքով, ցուցաբերում է կողմնակալություն. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել: Կախկյտե Հայրապետյան (44 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե կարծում եք, որ Ձեր գործով դատավորը խախտում է օրենքով սահմանված իր վարքագծի կանոնները, ապա դրանց խախտման վերաբերյալ կարող եք դիմում-բողոք ներկայացնել ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ, որն իրավասու է քննել դատավորների վարքագծի հետ կապված բողոքները, հարուցել կարգապահական վարույթներ եւ դատավորներին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ

«ԺՈՂՎՈՒՐԳ». Դուք կարող եք նաեւ Ձեր գործով տվյալ դատավորին ներկայացնել բացարկ հայտնելու մասին միջնորդություն՝ խնդրելով ընդունել այն եւ Ձեր գործը փոխանցել մեկ այլ դատավորի: Դուք պետք է բացարկը հայտնեք մինչեւ նախնական դատական նիստի ավարտը, իսկ դրանից հետո մինչեւ գործի ավարտը կարող եք բացարկ հայտնել, եթե Դուք կհիմնավորեք, որ բացարկ հայտնելու հիմքերը ծագել են Ձեզ հայտնի են դարձել նախնական դատական նիստի ավարտից հետո: Բացարկ հայտնելու դեպքում գործի քննությունն ընդհատվում է մինչեւ այդ հարցի լուծումը: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան երեք օրով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Երեւանի պետական բժշկական համալսարանի ուսանողները հանդիսավոր կերպով Մատենադարանին հանձնեցին միջնադարյան անվանի բժշկագետ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկության» աշխատության ընդօրինակված ձեռագիրը (18-րդ դար), որը ձեռք էին բերել իրենց միջոցներով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդադարանանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____

Ազգանուն՝ _____

Առաքման հասցե՝ _____

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



| | | | |
|-----------------------|----------------------|-----------------------|----------------------|
| Շիրակ | 0 - 4 + 8 + 12 | Արարատ | 0 + 3 + 17 + 19 |
| Կոտայքի լեռներ | - 1 - 5 + 7 + 11 | Արմավիր | - 1 + 2 + 17 + 19 |
| Կոտայքի նախալեռներ | 0 + 2 + 13 + 15 | Վայոց ձորի լեռներ | - 2 - 5 + 9 + 11 |
| Գեղարքունիք | 0 - 5 + 6 + 11 | Վայոց ձորի նախալեռներ | - 1 + 2 + 17 + 19 |
| Լոռի | - 1 - 5 + 10 + 13 | Սյունիքի հովիտներ | + 3 + 7 + 16 + 19 |
| Տավուշ | - 2 + 3 + 12 + 15 | Սյունիքի նախալեռներ | 0 - 2 + 9 + 12 |
| Արագածոտնի լեռներ | 0 - 3 + 7 + 11 | ԼՂՀ | 0 - 4 + 9 + 13 |
| Արագածոտնի նախալեռներ | - 1 + 3 + 11 + 15 | Երեւան | + 6 + 8 + 12 + 16 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 18.11.2024
Տպաքանակ՝ 3968

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: